ԲԱՇԽԻՐ ՈՒԺԵՐԸ: ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ՔԱՌՍԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

(Վեցերորդ ռազմավարություն)

Պատերազմի ամենակարևոր տարրերից են արագությունը և հարմարվողականությունը՝ որոշումներ կայացնելու և թշնամուց ավելի արագ գործելու ունակությունը: Սակայն դրան հասնելը հեշտ չէ: Մենք ռմբահարվում ենք ավելի շատ տեղեկատվությամբ, քան երբևէ, ինչը դժվարացնում է մտածելը և որոշումներ կայացնելը: Մենք ստիպված ենք կառավարել ավելի ու ավելի շատ մարդկանց, որոնք ցրված են զգալի հեռավորություններում, և մենք ավելի ու ավելի ենք հայտնվում անորոշության իրավիճակներում: Հիշե՛նք Նապոլեոնի՝ այդ մեծագույն ռազմական առաջնորդի դասերը. արագությունն ու ճկունությունը կարելի է զարգացնել միայն զորքերի կազմակերպման մանևրային և շարժունակ կառուցվածք ունենալու միջոցով: Բաժանեք ձեր բանակը փոքր, անկախ խմբերի, որոնք կարող են գործել և որոշումներ կայացնել ինքնուրույն: Դուք անհասանելի կդառնաք թշնամու համար, եթե կարողանաք մարդկանց մեջ արթնացնել ռազմական ոգին: Տվեք նրանց առաքելություն և թույլ տվեք, որ այն իրականացվի:

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՆԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ

1800 թվականին, Մարենգոյի ճակատամարտում ջախջախելով ավստրիական զորքերը, Նապոլեոն Բոնապարտը նվաճեց Հյուսիսային Իտալիան և ստիպեց ավստրիացիներին ստորագրել պայմանագիր, որով նրանք ճանաչում էին ֆրանսիացիների տարածքային զավթումները ինչպես այստեղ, այնպես էլ Բելգիայում: Հաջորդ հինգ տարիներին հաջողվեց պահպանել խաղաղություն, որի ընթացքում Նապոլեոնն իրեն հռչակեց Ֆրանսիայի կայսր, ուստի շատերի համար ակնհայտ դարձավ, որ այս կորսիկացին կանգ չի առնելու այնտեղ, որտեղ կանգնել էր, քանզի նրա փառասիրությունն անսահման էր: Ավստրիացի գեներալ-քվարտմեյստեր Կարլ Մաքքը, բանակի ամենահին և ամենաազդեցիկ գեներալներից մեկը, առաջարկեց կանխիչ հարված հասցնել Ֆրանսիային, քանի որ բանակը բավականաչափ մեծ էր հաղթանակը երաշխավորելու համար: Նա համոզեց իր ընկերներին, որ «Պատերազմի նպատակը թշնամուն հաղթելն է, այլ ոչ թե պարզապես պարտությունից խուսափելը»:

Մաքքը և նրա կողմնակիցները աստիճանաբար ուժ հավաքեցին, և 1805 թվականի ապրիլին Ավստրիան, Անգլիան, Ռուսաստանը և Շվեդիան ստորագրեցին ռազմական դաշինքի մասին պայմանագիր, որի նպատակն էր սկսել ռազմական արշավ Ֆրանսիայի դեմ ու նրան հետ մղել դեպի նախկին, նախապոլեոնյան սահմանները: Նույն տարվա ամռանը մշակվեց պլան, ըստ որի 95 հազարանոց ավստրիական զորքերը պետք է հարձակում սկսեին Հյուսիսային Իտալիայում և վրեժ լուծեին 1800 թվականին կրած ամոթալի պարտության համար: Մեկ այլ՝ 23 հազարանոց զորախումբը պետք է պաշտպաներ Տիրոլը, որը գտնվում էր Իտալիայի և Ավստրիայի սահմանին: Իսկ Մաքքը, 70 հազարանոց բանակի գլխավորությամբ, պետք է սկսեր առաջխաղացումը Դանուբի երկայնքով դեպի Բավարիա: Նրա խնդիրն էր կանխել ֆրանսիացիների և բավարական հողերի միջև դաշինքի կնքումը, քանզի այդ հողերը չափազանց կարևոր ռազմավարական դիրքը էին զբաղեցնում:

Ամրապնդվելով Բավարիայում՝ Մաքքը և նրա խմբավորումը ստիպված էր այնտեղ մնալ մի քանի շաբաթ՝ սպասելով ռուսական բանակի ժամանմանը՝ ևս 75 հազար զինվոր: Այստեղ նրանք պետք է միավորվեին, որից հետո անխորտակելի միացյալ ուժը պետք է շարժվեր արևմուտք՝ դեպի Ֆրանսիա: Մինչդեռ բրիտանացիները պետք է ծովից սկսեին հարձակումը ֆրանսիացիների դեմ: Ավելի ուշ նախատեսվում էր հզորացնել յուրաքանչյուրի ճակատ, հասցնելով միացյալ ուժերի թվաքանակը աննախադեպ մասշտաբի՝ 500 հազարի, որի նմանը Եվրոպան երբեք չէր տեսել: Նույնիսկ Նապոլեոնը չէր կարողանա պայքարել իր բանակից կրկնակի մեծ բանակի դեմ , որը հարձակվում էր բոլոր կողմերից:

Սեպտեմբերի կեսերին Մաքքը սկսեց ռազմարշավը դեպի Բավարիայի սիրտը՝ առաջանալով Դանուբի երկայնքով դեպի Ուլմու:

Հասնելով իր նշանակման վայր և զինվորներին տեղավորելուց հետո՝ Մաքքը զոհունակությամբ զեկուցեց դաշնակիցներին, որ առաջադրանքը կատարված է: Գեներալի համար անտանելի էր անկարգությունն ու անորոշությունը: Նա փորձում էր ամեն ինչ նախապես մտածել, մշակել հստակ պլան և հնարավորինս խստորեն հետևել դրան: Նա այն անվանեց «պատերազմի ժամացույցի մեխանիզմ»: Մաքքը իր պլանը համարում էր անթերի. այն ոչ մի կերպ չէր կարող ձախողվել, Նապոլեոնը դատապարտված էր:

Մաքքի կյանքում կար մի դրվագ, երբ գերի ընկնելուց հետո նա ստիպված եղավ երեք տարի անցկացնել Ֆրանսիայում: Այնտեղ նա ծանոթացավ Նապոլեոնյան

պատերազմի վարման ոճին: Հրամանատարի ռազմավարությունն էր ստիպել թշնամուն բաժանել իր ուժերը, բայց այժմ այս մեթոդը շրջվում էր նրա դեմ: Իտալիայում տիրող խնդիրները թույլ չէին տալիս Նապոլեոնին համախմբել իր բոլոր ուժերը, և նա չէր կարող իրեն թույլ տալ 70 հազարից ավելի զինվոր ուղարկել Բավարիա: Մինչև Նապոլեոնի զորքերը հատեին Հռենոսը, ավստրիացիները պատրաստ կլինեին և կանեին ամեն ինչ ֆրանսիացիների առաջխաղացումը կասեցնելու համար: Նապոլեոնից առնվազն երկու ամիս կպահանջվեր, որպեսզի վերջապես հասներ Դանուբին: Այս ժամանակ ավստրիական և ռուսական բանակ-ները արդեն միավորված կլինեին և անարգել կանցնեին Էլզասով և Ֆրանսիայով:

Մաքքի մշակված պլանը նախատեսում էր բոլոր անակնկալները, չափազանց պարզ և հուսալի էր: Գեներալն արդեն շուրթերին զգում էր Նապոլեոնի նկատմամբ հաղթանակի համը, որին ատում էր ամբողջ հոգով, ինչպես ատում էր այն ամենը, ինչ կապված էր նրա անվան հետ՝ անկարգապահ (ավելի ճիշտ ՝ Մակկի կարծիքով ան-բավարար վարժեցված) զինվորներ, հեղափոխությունների հրահրում Եվրոպայում, խաղաղության և հանգստության մշտական սպառնալիք: Մաքքին մնում էր հանգիստ սպասել ռուսական բանակին Ուլմում:

Սեպտեմբերը մոտենում էր ավարտին, երբ Մաքքը զգաց, որ ինչ-որ տարօրինակ բաներ են տեղի ունենում: Ուլմից արևմուտք, նրա դիրքերի և Ֆրանսիայի սահմանի միջև, գտնվում էր Շվարցվալդի լեռնաշղթան: Հետախույզները հանկարծ սկսեցին հաղորդել ֆրանսիական զորքերի առաջխաղացման մասին անտառի միջով՝ ավստրիական դիրքերի ուղղությամբ: Մաքքը շփոթված էր այս լուրից: Նա սպասում էր, որ Նապոլեոնը կանցնի Հռենոսը շատ ավելի հյուսիս: Սա ավելի խելամիտ էր թվում, քանզի արևելք տանող ճանապարհը շատ ավելի հարմար էր ֆրանսիացիների համար և գործնականում անհնար կլիներ նրանց կանգնեցնելը: Սակայն Նապոլիոնը կրկին ապշեցրեց հակառակորդին անսպասելի քայլով՝ իր բանակն ուղղելով Շվարցվալդի լեռների նեղ կածաններով՝ ուղիղ դեպի Մաքքը: Նույնիսկ եթե դա ոչ այլ ինչ էր, քան խաբուսիկ մանևր, Մաքքը դեռ պետք է մտածեր պաշտպանության մասին, ուստի նա իր ուժերն ուղղեց դեպի արևմուտք, դեպի Շվարցվալդ՝ ֆրանսիացիների առաջխաղացումը կասեցնելու համար մինչև ռուսական ուժերը կմոտենային:

Անցավ մի քանի օր: Մաքքը անհանգստացած էր: Իրականում նա իսկական շփոթմունքի մեջ էր: Ֆրանսիացիները առաջ էին շարժվում Շվարցվալդով, իսկ հեծելազորի առաջապահ ստորաբաժանումները շատ ավելի առջևում էին: Միևնույն ժամանակ հայտնի դարձավ, որ բազմաթիվ ֆրանսիական ուժեր շարժվում են ավստրիացիների դիրքերից հյուսիս: Հետախուզության հաղորդագրությունները հակասական էին: Ոմանք ասում էին, որ ֆրանսիական բանակը գտնվում էր Շտուտգարտում՝ Ուլմից վաթսուն մղոն հյուսիս-արևմուտք: Մյուսներն պնդում էին, որ նրանք գտնվում են ավելի արևելք կամ ավելի հյուսիս, կամ նույնիսկ շատ մոտ են Դանուբի ափին: Ավելի ճշգրիտ տեղեկություններ ստանալ հնարավոր չէր, քանի որ ֆրանսիական հեծելազորային ստորաբաժանումները շրջափակել էին Շվարցվալդը և թույլ չէին տալիս հետախույզներին ներթափանցել հյուսիս:

Ամենից շատ ավստրիացի հրամանատարը վախենում էր անորոշությունից, և այժմ տվյալների պակասը վախեցնում էր նրան, խանգարում էր կենտրոնանալ և սառնասրտորեն տրամաբանել: Ի վերջո, Մաքքը իր ուժերը միավորելու համար որոշում կայացրեց հետ կանչել զորքերը Ուլմու: Հնարավոր էր, որ Նապոլեոնը

պլանավորում է նրանց դեմ ճակատամարտել հենց այդտեղ: Այդ դեպքում նրանք կլինեն հավասար պայմաններում:

Հոկտեմբերի սկզբին ավստրիական հետախուզությունը վերջապես կարողացավ հասկանալ, թե ինչ է իրականում կատարվում, և լուրերը սարսափելի էին: Ֆրանսիական բանակը հատել էր Դանուբը Ուլմից արևելք՝ արգելափակելով Մաքքի դեպի Ավստրիա նահանջելու ուղիները և կտրել ռուսների ճանապարհը: Ֆրանսիացիների երկրորդ զորախումբը կանգնած էր հարավում՝ փակելով ճանապարհը դեպի Իտալիա: Ինչպե՞ս դա պատահեց, ինչպե՞ս 70 հազար ֆրանսիացիներ մոտեցան և հայտնվեցին միաժամանակ մի քանի վայրերում, նույնիսկ այդքան արագ շարժվելով: Մաքքը, խուճապի էր մատնվել, նա բոլոր ուղղություններով հետախույզներ ուղարկեց: Վերջապես հետախույզները թույլ տեղ գտան ֆրանսիական դիրքերում՝ հյուսիս և արևելք տանող ճանապարհները փակված էին փոքր ուժերով: Հենց այնտեղ էլ կարելի էր ճեղքել: Մաքքը սկսեց նախապատրաստվել արշավի: Բայց երկու օր անց՝ հոկտեմբերի 13-ին, երբ նա պատրաստվում էր նահանջի հրաման տալ, հետախույզները հայտնեցին, որ գիշերվա ընթացքում ֆրանսիացիները հզոր լրահամալրում են ստացել, ուստի այժմ հյուսիս և արևելք տանող ճանապարհը նույնպես կտրված էր:

Մի քանի օր անց՝ հոկտեմբերի 20-ին, լուր ստանալով, որ ռուսները օգնության չեն հասնելու, Մաքքը հանձնվեց: Ավելի քան 60 հազար ավստրիացի զինվոր գերի ընկան գրեթե առանց կրակոցի: Դա մարդկության պատմության ապշեցուցիչ հաղթանակներից էր:

Մի քանի ամիս անց Նապոլեոնի բանակը շրջվեց դեպի արևելք՝ ռուսների և ավստրիական բանակի մնացորդների դեմ կռվելու և Աուստերլիցի մոտ փայլուն հաղթանակ տարավ: Մինչդեռ Մաքքը տառապում էր ավստրիական բանտում պարտության մեջ իր անփառունակ դերակատարման համար՝ դատապարտված լինելով երկու տարվա ազատազրկման: Բանտում նա գլուխ էր կոտրում (և, ինչպես ասում են, նույնիսկ խելագարվում էր), փորձելով հասկանալ՝ ի՞նչ էր բաց թողել: Որտե՞ղ էր նրա անթերի պլանում սխալը: Ինչպե՞ս պատահեց, որ ոչ մի տեղից նրանից արևելք, հանկարծ հայտնվեց մի ամբողջ բանակ: Նա իր կյանքում երբեք նման բանի չէր հանդիպել, և մինչև իր օրերի վերջը փնտրում էր այս հարցի պատասխանը:

Մեկնաբանում

Պատմությունը խստորեն չի դատապարտում գեներալ Մաքքին, քանի որ այդ ֆրանսիական միավորումները, որոնց նա անհաջող փորձեց դիմակայել 1805-ի աշնանը, համաշխարհային ռազմական պատմության ամենաարտասովոր բանակներից մեկն էր, ռազմական արվեստում նորարարական գաղափարների մարմնացումը:

Հազարամյակներ շարունակ բոլոր պատերազմները, մեծամասամբ, մղվել են նույն չափորոշիչներով: Զորահրամանատարը իր՝ մեծ, ամուր բանակը առաջադրում էր հակառակորդի բանակի դեմ, որը մոտավորապես իր չափերով հավասար էր սեփական բանակին: Նա բանակը չտրոհեց ավելի փոքր ստորաբաժանումների, քանի որ դա կխախտեր ուժերի կենտրոնացման կարևոր սկզբունքը: Ավելին, առավել դժվար կլիներ հրամանատարել տրոհված, ցրված զորքերին, ինչը մարտի ընթացքում վերահսկողությունը կորցնելու ռիսկի կհանգեցներ:

Նապոլեոնը բոլորովին անսպասելիորեն արմատապես փոխեց այս ամենը: Խաղաղ ժամանակահատվածում՝ 1800-1805 թվականներին, նա վերակազմավորեց ֆրանսիական բանակը՝ հավաքելով ամենատարբեր ուժեր և ձևավորելով Grande Armee՝ մեծ բանակ, որի ընդհանուր թվաքանակը կազմեց 210,000 զինվոր: Այս բանակը նա բաժանեց կորպուսների, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր հեծելազորը, հետևակը, հրետանին և շտաբը: Յուրաքանչյուր կորպուս ղեկավարում էր մարշալը, սովորաբար նրանք երիտասարդ գեներալներ էին, ովքեր իրենց արժանապատվորեն էին դրսևորել նախորդ արշավներում: Յուրաքանչյուր կորպուս բաղկացած էր տասնհինգից - երեսուն հազար մարդուց և ներկայացնում էր անկախ մարտական միավոր ՝ մինի-բանակ, որը ղեկավարում էր մինի-Նապոլեոնը:

Այսպիսի համակարգի հիմնական առավելությունը կորպուսների մանևրելիությունն էր, դրանց արագությունն ու շարժունակությունը: Նապոլեոնը հրամաններ էր տալիս մարշալներին և առաջադրանքները կատարելու համար հնարավորություն էր տալիս ինքնուրույն գործելու: Հրամանների ստացումից մինչև կատարումը շատ քիչ ժամանակ էր անցնում, և փոքրիկ բանակները, որոնք ծանրաբեռնված չէին ծանր գումակներով (հասկանալի է, որ նրանց շատ ավելի քիչ գույք էր պետք), շարժվում էին զգալի արագությամբ:

Միասնական բանակը մեկ ուղղությամբ առաջնորդելու փոխարեն, Նապոլեոնին հնարավորություն ընձեռնվեց գործել առանձին միավորումներով՝ երբեմն բազմազան ձևերով տրոհելով կամ միավորելով դրանք և թշնամուն շփոթության մեջ գցելով՝ անզորության մատնեց հասկանալու, թե ինչ է թաքնված այդ «քառսային» շարժումների հետևում:

Սա այն հրեշն էր, որով Նապոլեոնը երևան եկավ Եվրոպայում 1805 թվականի սեպտեմբերին: Մինչ մի քանի կորպուսներ տեղակայված էին Հյուսիսային Իտալիայում՝ խանգարելով ավստրիացիներին այդ ուղղությամբ առաջ շարժվել, յոթ կորպուս շարժվեցին դեպի արևելք և առանձին-առանձին, տարբեր կողմերից, ներխուժեցին Գերմանիա:

Ռեզերվային ջոկատը, որը հիմնականում բաղկացած էր հեծելազորից, շարժվեց դեպի Շվարցվալդ՝ Մաքքի դիրքերից արևմուտք, դրանով իսկ վերջնականապես շփոթեցնելով նրան և ստիպելով նրան թաղվել գուշակությունների մեջ, թե ի՞նչ է կատարվում հյուսիսում (Նապոլեոնը շատ հստակ հասկանում էր ավստրիացու ուղիղ տրամաբանությունը և հույս ուներ, որ թվացյալ խառնաշփոթը բարոյալքելու է նրան և դարձնելու է հեշտ որս): Միևնույն ժամանակ, յոթ կորպուսներ, որոնց հենակետը Շտուտգարտն էր, շարժվեցին դեպի հարավ մինչև Դանուբ՝ կտրելով Մաքքի բանակների նահանջի ճանապարհը: Կորպուսի հրամանատարներից մեկը, տեղեկություններ ստանալով, որ հյուսիս-արևելյան ուղղությամբ ճանապարհը բավականաչափ ամրացված չէ, չսպասեց Նապոլեոնի արձագանքին և իր որոշումով , ինքնուրույն և օպերատիվ կերպով ուղևորվեց այնտեղ ու շտկեց իրավիճակը:

Ուր էլ որ նետվեր Մաքքը, նա բախվելու էր մի այնպիսի ուժի, որը բավականաչափ մեծ էր, որպեսզի նրան տեղում պահեր մինչև ֆրանսիական բանակը վերջնականապես կփակեր շղթան: Սա հիշեցնում էր, թե ինչպես է կոյոտների ոհմակը քշում և շրջապատում նապաստակին: Կարևոր է գիտակցել, որ ապագան այսպիսի հեշտ բարձրացող, շարժական և, հետևաբար, խուսափողական ջոկատներինն է:

Դուք, որպես առաջնորդ, կարող եք ունենալ բնական ցանկություն՝ վերահսկելու գործընթացը, համակարգելու այն յուրաքանչյուր փուլում, բայց առաջնորդության այս

ոճը անհույս հնացած է, այսպիսի համակարգը հիշեցնում է անցյալի ծանրակշիռ և անշնորհք բանակները: Որպեսզի չվախենաք այն բանից, ինչը, ինչպես կարող է թվալ, սահմանակից է քաոսին և խառնաշփոթին, որոշակի քաջություն կպահանջվի՝ ստիպված կլինեք մի փոքր թուլացնել սանձերը: Բայց, հրաժարվելով կենտրոնացումից և ձեր բանակը բաժանելով փոքր խմբերի, դուք կշահեք շարժունակությամբ, և դա կփոխհատուցի վերահսկողության մասնակի կորուստը: Ի վերջո, շարժունակությունը բոլոր հնարավոր ուժերի բազմապատկիչներից ամենահզորն է: Այն թույլ կտա ձեզ միավորել և տարակենտրոնացնել ձեր զորքերը անվերջ տարբերակներով, խուսափելով անհարմար գծայնությունից: Արդյունքը երկար սպասել չի տա: Այս ճկունությունը կզարմացնի և կզինաթափի ձեր հակառակորդներին:

Փոքր խմբերն ավելի օպերատիվ են, նրանց ստեղծագործականությունն ավելի բարձր է, նրանք ավելի հեշտ և արագ են հարմարվում: Այսպիսի ստորաբաժանումներում զինվորներն ու սպաները լիարժեք ընդգրկված են տեղի ունեցողի մեջ, նրանք ունեն շահագրգռվածության բարձր մակարդակ, հետևաբար մեծ է նաև նվիրվածությունը գործին: Ի վերջո, այս մոտեցմամբ դուք ավելինի կհասնեք, քան եթե փորձեք վերահսկել յուրաքանչյուր մանրուք:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱԼԻՆԵՐԸ

Այս աշխարհում շատերը փորձում են գտնել հաջողության և իշխանության գաղտնքի բանաձևը, սակայն նրանք չեն ցանկանում ինքնուրույն մտածել՝ պահանջելով պատրաստի բաղադրատոմս: Ռազմավարությունների գաղափարը նրանց գրավում է նույն պատճառով: Նրանք կարծում են, որ ռազմավարությունը փուլերի հաջորդականություն է, որոնց միջով անցնելով կարող են անկասկած, երաշխավորված հասնել որոշակի նպատակի: Նրանք ցանկանում են այս քայլերի ցանկը ստանալ որևէ փորձագետից, ուսուցչից, գուրուից: Հավատալով ընդօրինակման ուժին նրանք անհամբեր սպասում են իմանալու, թե գագաթնակետին հասնելու համար ինչպես է այս կամ այն մեծ մարդը գործել: Նրանց վարքագիծը կյանքում նույնքան մեխանիկական և պարզ է, որքան նրանց մտածողությունը:

Ամբոխից առանձնանալու համար անհրաժեշտ է մեկընդմիշտ ազատվել տարածված սխալ պատկերացումից: Ռազմավարության էությունը ուրիշի հանճարեղ պլանը կյանքի կոչելը և դրանով հաջողության հասնելը չէ: Դրա էությունը կայանում է այլուր՝ իրավիճակը այնպես կառուցելու ունակության մեջ, որ դու ավելի շատ հնարավորություններ և ավելի շատ ազատության աստիճաններ ունենաս, քան քո հակառակորդը: Ա տարբերակը որպես միակ ճիշտ լուծում ընդունելու փոխարեն, իսկական ռազմավարը կփոխի իրավիճակը այնպես, որ հանգամանքներից կախված՝ կարողանան օգտագործել Ա, Բ կամ Գ տարբերակները: Սա ռազմավարական մտածողության խորությունն է, որը կարծրատիպային մտածողության հակառակն է:

Սուն-Ցզին այս միտքը այլ կերպ է արտահայտել: Նպատակը, որին ուղղված է ռազմավարությունը, նա անվանեց ռազմավարական ուժի կիրառման վայր (ուժը այս դեպքում ոչ այլ ինչ է, քան պոտենցիալ ուժ կամ էներգիա): Այդպիսի տեղ կարող է լինել, օրինակ, բլրի գագաթին ճոճվող մի գլաքար կամ ամուր ձգված աղեղալար: Պարզապես թեթևակի դիպչեք քարին կամ բաց թողեք աղեղալարը, և տեղի կունենա էներգիայի ակնթարթային արտանետում: Քարը կարող է գլորվել, իսկ նետը թռչել ցանկացած ուղղությամբ, դա կախված է թշնամու գործողություններից: Կարևորը ոչ թե ինչ-որ մեկի կողմից նախապես որոշված ուղիով գնալն է, այլ ինքներդ ձեզ

այնպիսի դիրքում դնելը, որտեղ կիրառվում է ռազմավարական ուժ և օգտվել առաջացող հնարավորություններից:

Նապոլեոնը, ամենայն հավանականությամբ, ոչինչ չգիտեր Սուն-Ցզիի այս հայեցակարգի մասին, այնուամենայնիվ, իր բոլոր գործողություններով նա կարծես ցույց էր տալիս դրա խորը ըմբռնումը: Հռենոսի երկայնքով թվացյալ խառնաշփոթի մեջ յոթ ջոկատ տեղակայելով և պահեստային ջոկատը Շվարցվալդ ուղղելով՝ նա որոշեց ռազմավարական ուժի կիրառման վայրը: Ուր էլ որ Մաքքը շրջվեր, ինչ էլ որ աներ, ավստրիացիները դատապարտված էին: Նապոլեոնն ուներ անսահման թվով տարբերակներ, մինչդեռ Մաքքը ուներ միայն մի քանիսը, այն էլ անպետք:

Նապոլեոնը միշտ փնտրում էր ռազմավարական ուժի իր սեփական տարբերակը, և 1805 թվականի արշավանքի ժամանակ նա դա անթերի իրականացրեց: Լիովին գիտակցելով կազմակերպման և կառուցվածքի կարևորությունը, նա զարգացրեց կորպուսային համակարգը՝ ճկունությունն ու շարժունակությունը դարձնելով իր բանակի հիմքը: Դասը պարզ է. ոչ ճկուն, կենտրոնացված կառուցվածքը կաշկանդելու է ձեզ՝ սահմանափակելով ձեր տարբերակները գծային կառուցվածքներով: Շարժունակ բանակը, որը բաժանված է մոբիլ ստորաբաժանումների, ռազմավարական ուժի կիրառման ազատության ընտրության բազմաթիվ տարբերակների հնարավորություններ են ընձեռնում: Կառուցվածքը հենց ռազմավարությունն է: Հավանաբար սա է ձեր կողմից երբևէ կայացրած առավել ռազմավարական ընտրությունը: Եթե ժառանգել եք թիմ, վերլուծեք դրա կառուցվածքը և փոխեք այն ձեր նպատակներին համապատասխան:

Այս գործընթացին վերաբերվեք հոգով, մի խնայեք ստեղծագործական էներգիան: Դրանով դուք ոչ միայն գնում եք Նապոլեոնի հետքերով, այլև հետևում եք նոր պատմության առավել, թերևս, արդյունավետ և հզոր ռազմական մեքենայի՝ պրուսական (իսկ ավելի ուշ՝ գերմանական) բանակի օրինակին:

Նապոլեոնից ջախջախիչ պարտություն կրելով 1806 թվականի Յենայի և Աուերշթեդտի ճակատամարտում (տե՛ս երկրորդ ռազմավարություն), պրուսական բանակի ղեկավարները կատարեցին արժեքների որոշակի վերագնահատում: Նրանք կոշտ և ինքնաքննադատորեն վերաբերվեցին իրենց և նկատեցին անցյալի սխալները:

Իրավիճակը կտրուկ փոխվեց, և ռազմական բարեփոխումների կողմնակիցներին, այդ թվում՝ Կարլ ֆոն Կլաուզևիցին, տրվեցին զգալի լիազորություններ: Եվ նրանք աննախադեպ քայլ կատարեցին՝ զարգացնելով գերազանց բանակային կառուցվածք և դրանով իսկ հիմք դնելով ապագա հաջողությունների համար: Այս հեղափոխական վերափոխման հիմքում ընկած էր բարձր որակավորում ունեցող, ռազմական գործերի, ռազմավարության և մարտավարության, ինչպես նաև կառավարման և հրամանատարության արվեստին տիրապետող կադրային սպաների պատրաստումը: Պետության ղեկավարը, վարչապետը կամ նույնիսկ գեներալը կարող է ոչինչ չհասկանալ ռազմական գիտությունից, բայց փայլուն կրթություն ստացած և հատուկ պատրաստված բանակի սպաները կարող էին և պետք է փոխհատուցեին այդ թերությունները: Այս կազմակերպության կառուցվածքը խստորեն ամրագրված չէր: Յուրաքանչյուր նոր զորահրամանատար կարող էր փոխել դրա չափերն ու կազմը՝ համաձայն իր նպատակների, կատարվող խնդիրների և ժամանակի պահանջների:

Յուրաքանչյուր ռազմական արշավից կամ զորավարժությունից հետո իրականացվում էր համապարփակ վերլուծություն: Այդ նպատակով ստեղծվել էր հատուկ բաժին, որի իրավասությունն էր վերլուծական հետազոտությունների և

համաշխարհային ռազմական փորձի ուսումնասիրությունը: Կադրային սպաները հնարավորություն ունեին ուսումնասիրելու ոչ միայն իրենց, այլև ուրիշների սխալները: Այս աշխատանքը նախատեսվում էր անընդհատ զարգացնել:

Ամենակարևոր բարեփոխումը Auftragstaktik-ի (հրամանատարին հանձնարարված խնդիրը կատարելու գործում ինքնուրույնություն տալու սկզբունք) մշակումն էր: Գերմաներենում կա երկու բառ, որոնք նշանակում են «հրաման»՝ Auftrag և Befehl, բայց դրանց իմաստային երանգները որոշ չափով տարբեր են: «Befehl»-ը իրականում հրաման է՝ ռազմական առումով հստակ և կոնկրետ, որը պետք է կատարվի տառացիորեն: «Auftrag»-ը նշանակում է ավելի ընդհանուր բան. դա հանձնարարական է, մի տեսակ հրահանգ, որի կատարման ժամանակ պետք է հետևել ոգուն, այլ ոչ թե տառին: Ամբողջ բարեփոխումը հիմնված էր Auftragstaktik-ի վրա՝ Պրուսիայի ամենավատ թշնամի Նապոլեոնի առաջարկած մարտավարությունն ու իր մարշալներին շնորհած ազատությունը: Ծառայության հենց սկզբից սպաները ներշնչված էին գերմանական ռազմական արվեստի ընդհանուր սկզբունքներով՝ արագություն, ռազմական գործողությունների հարձակողական բնույթ և այլն: Անկախ մտածողության զարգացմանն ուղղված վարժությունների ընթացքում սպաները սովորել էին դժվարին իրավիճակներում որոշումներ կայացնել, որոնք, ընդհանուր գաղափարախոսությանը չհակասելով, համապատասխանում էին կոնկրետ հանգամանքներին և իրավիճակներին:

Զորավարժությունների ընթացքում սպան, գտնվելով Նապոլեոնի կորպուսի անալոգային զորամասի ղեկավարի պաշտոնում, ստանում էր մարտական առաջադրանք, որից հետո ստիպված էր գործել ինքնուրույն: Նրան դատում էին արդյունքներով, այլ ոչ թե այդ արդյունքներին հասնելու միջոցներով:

Գերմանիայի գլխավոր շտաբը (կարճատև ընդհատումներով) գործել է 1808 թվականից մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը: Այս ժամանակահատվածում գերմանական բանակը անընդհատ հաղթանակներ էր տոնում այլ երկրների բանակների, այդ թվում՝ Առաջին համաշխարհային պատերազմում Անտանտի ուժերի դեմ մարտերում, չնայած խրամատային պատերազմի բոլոր դժվարություններին:

Գերմանիայի ռազմական հաջողությունների գագաթնակետը կարելի է համարել նորագույն պատմության կայծակնային ռազմական հաղթանակը՝ 1940 թվականի բլիցկրիգը, այն է ներխուժումը Ֆրանսիա և Նիդեռլանդներ, երբ գերմանական բանակն ակնթարթորեն ճզմեց ֆրանսիացիների դանդաղ պաշտպանությունը: Իրենց հաղթանակներով գերմանացիները պարտական էին բանակի կառուցվածքին և auftragstaktik-ի կիրառմանը՝ մարտավարություն, որն ապահովում էր բազմազան հնարավորություններ և ուներ զգալի ներուժ:

Գերմանիայի Գլխավոր շտաբը կարող է ծառայել որպես կազմակերպչական մոդել ցանկացած կոլեկտիվի համար, որը ցանկանում է ձեռք բերել շարժունակություն և ռազմավարական ուժ: Նախևառաջ, կառուցվածքը ճկուն էր, ինչը թույլ էր տալիս ղեկավարներին այն հարմարեցնել իրենց կարիքներին: Երկրորդ՝ անընդհատ ինքնագնահատում էր կատարվում, և անհրաժեշտության դեպքում անմիջապես անհրաժեշտ փոփոխությունները կատարվում էին աշխատանքի ընթացքում: Երրորդ, բանակում վերարտադրվում էր անձնակազմի կառուցվածքը բոլոր մակարդակներում՝ շտաբի սպաներ, կրտսեր կոչման սպաներ, և այլն՝ նվազման կարգով: Նույնիսկ ամենափոքր ստորաբաժանումներում ներդրվում էին սկզբունքներ, որոնք ընդհանուր էին բոլոր մակարդակների համար:

Վերջապես, կոշտ հրամանների փոխարեն, ընդունվեց auftragstaktik համակարգը, դիրեկտիվները: Այս մարտավարության կիրառումը հնարավորություն տվեց զինվորներին և սպաներին ավելի պատասխանատու, ստեղծագործորեն մոտենալ առաջադրանքների կատարմանը, ապահովել զգալի հաջողություններ տարբեր մարտական խնդիրների կատարման գործում և արագացնել որոշումների կայացման գործընթացը:

Շարժունակությունը ներդրված էր համակարգի հիմքում: Auftragstaktik-ի գլխավոր կետը թիմի ընդհանուր սկզբունքներն են: Դրանք կարող են հիմնված լինել ձեր կատարած բարի գործերի վրա, կամ այն վստահության վրա, որ թշնամու դեմ պայքարելով դուք բախվում եք չարիքի հետ: Դրանք կարող են նաև արտացոլել պատերազմի այն ոճը՝ պաշտպանողական, մանևրելու, անողոք, ագրեսիվ, որն առավել հարմար է ձեզ: Դուք պետք է միավորեք ձեր խումբը, ձեր թիմը այս սկզբունքների շուրջ: Այնուհետև, կուտակված փորձը փոխանցելով, կրթելով, ստեղծելով իրավիճակներ, որոնք նպաստում են յուրաքանչյուր մարդու ստեղծագործական ներուժի զարգացմանը, ամրապնդեք այս սկզբունքների կարևորությունը խմբի համար, ապահովեք, որ դրանք կարևոր դառնան խմբի բոլոր անդամների համար, որպեսզի դառնան նրանց մարմնի և արյան մի մասը:

Այժմ, ձեր ջոկատին ուղղություն և դրա իրականացմանն ազատություն տալով, դուք կարող եք վստահել խմբի անդամների որոշումներին և միևնույն ժամանակ վստահություն զգալ ձեր սեփական ուժերի նկատմամբ՝ որպես ընդհանուր գործողությունների համակարգող:

13-րդ դարի առաջին կեսին Չինգիզ խանի ղեկավարությամբ Մոնղոլական հորդաները, թերևս, Նապոլեոնի բանակի նախորդներն էին՝ իրենց շարժական կորպուսներով: Չինգիզ խանը, որը քարոզում էր մոնղոլական գերակայության գաղափարները, մանևրային պատերազմի վարպետ էր: Նրա բանակը, որը տարանջատված էր փոքր հեծյալ ջոկատների, կարող էր կամ հավաքվել, կամ անմիջապես ցրվել՝ կազմելով անթիվ տարբերակներ և սխեմաներ: Բանակները, որոնք ստիպված էին դիմակայել նրանց, կորչում էին թվացյալ քաոսի պայմաններում: Ձիավորները բոլորովին անկանխատեսելի էին, թվում էր, թե նրանց շարքերում լիակատար խառնաշփոթ է տիրում, բայց իրականում բոլոր մանևրները հիանալի համակարգված էին :

Մոնղոլ զինվորները խոսքերի կարիք չունեին: Նրանք գիտեին, թե ինչ պետք է անել և երբ: Նրանց դժբախտ զոհերի միակ բացատրությունն այն ենթադրությունն էր, որ նրանք դևերի տիրապետության տակ էին: Մոնղոլ զինվորների զարմանալի համակարգվածությունը, սակայն, խիստ մարզումների և անընդհատ վարժությունների արդյունք էր: Խաղաղ ժամանակ Չինգիզ խանը ամեն ձմեռ կազմակերպում էր «Մեծ որս»՝ երեքամսյա գործողություն, որի ընթացքում մոնղոլական ամբողջ բանակը տարածվում էր ութսուն մղոն երկարությամբ մեկնարկային գծի երկայնքով Կենտրոնական Ասիայի տափաստաններում կամ այժմյան Մոնղոլիայի տարածքում: Հարյուրավոր մղոններ հեռավորության վրա գետնին խրված ձողը նշանավորում էր որսի ավարտը: Հեծյալները շարժվում էին առաջ՝ իրենց առջևից քշելով ճանապարհին հանդիպած բոլոր կենդանիներին: Դանդաղ, ինչպես խորամանկամիտ պարում, գծերի ծայրերը ճկվում էին ի վերջո վերածվելով փակ շրջանի, որի ներսում հայտնվում էր որսը (ձողը միշտ շրջանի կենտրոնում էր): Օղակի սեղմման հետ մեկտեղ կենդանիներին սպանում էին: Ամենամեծ և ամենավտանգավոր գիշատիչները մնում էին վերջում: Մեծ որսը մոնղոլ զինվորների համար գերազանց մարզում էր, վարժանք, որի

ընթացքում նրանք կատարելագործում էին ազդանշանների միջոցով հեռավորության վրա շփվելու, գործողությունները ճշգրիտ համակարգելու, տարբեր իրավիճակներում խուճապի չենթարկվելու և հրամաններին չսպասելով որոշումներ կայացնելու իրենց կարողությունները: Այս զորավարժություններում նույնիսկ անվախությունն էր հղկվում: Սա նաև դառնում էր մի տեսակ վարժանք, երբ առանձին զինվորներ դուրս էին գալիս գիշատիչ կենդանիների դեմ առ դեմ կռվելու: Որսորդության և խաղերի միջոցով Չինգիզ խանը սերմանեց իր գաղափարախոսությունը, միավորեց մարդկանց, զարգացրեց փոխադարձ վստահություն նրանց մեջ և ամրապնդեց կարգապահություն:

Ձեր սեփական ջոկատները համախմբելիս գտեք եղանակներ, որոնք կօգնեն մարդկանց ավելի լավ ճանաչել միմյանց և կառուցել փոխադարձ վստահություն: Նման վարժությունները ոչ միայն կօգնեն նրանց միմյանց հետ հաղորդակցություն հաստատել, այլև կհանգեցնեն անելիքների ինտուիտիվ ըմբռնմանը: Դուք ստիպված չեք լինի թանկարժեք ժամանակը վատնել անվերջ հաստատումների, հաղորդագրությունների և հրահանգների փոխանցման վրա, և կազատվեք թիմի աշխատանքը անընդհատ վերահսկելու անհրաժեշտությունից: Եթե կարողանաք նման վարժությունները քողարկել որպես խաղ կամ զվարճանք, ինչպես Մեծ Որսի դեպքում, այնքան լավ:

Վերջապես, դուք պետք է կազմակերպեք ձեր խումբը, մշակեք դրա կառուցվածքը՝ ըստ ձեր զինվորների ուժեղ և թույլ կողմերի, նրանց կյանքի և սոցիալական հանգամանքների: Որպեսզի դա ստացվի, դուք պետք է առավելագույն զգայունություն ցուցաբերեք ձեր թիմի անդամների, նրանց մարդկային հատկությունների նկատմամբ: Դուք պարտավոր եք հասկանալ մարդկանց ամեն ինչում, մինչև ամենափոքր մանրուքը, ինչպես նաև զգալ ժամանակի ոգին:

ԱՄՆ քաղաքացիական պատերազմի ժամանակ Միության լիգայի գեներալները (հյուսիսայինները) ուժասպառ էին լինում՝ փորձելով անկարգ ամբոխը վերածել բանակի: Ի տարբերություն կարգապահ, հիանալի պատրաստված Կոնֆեդերացիայի զորքերի, հյուսիսայինները վարժեցված չէին, ավելին զորակոչվել էին բռնի ուժով: Մեծամասամբ նրանք գաղութարար-պիոներներ էին, անտաշ, բռի տղամարդիկ և թափառաշրջիկներ, ովքեր երկու ձեռքով կառչած էին իրենց անկախությունից: Որոշ գեներալներ փորձում էին կարգապահություն մտցնել զորքերում, բայց մեծամասամբ անհաջողությամբ էր ավարտվում: Մյուսները կենտրոնացած էին ռազմավարական պլանների մշակման վրա և չէին կարևորում, բանակի բարձիթողի վիճակը:

Գեներալ Ուիլյամ Թեքումսե Շերմանը խնդրին այլ կերպ մոտեցավ: Նա փոխեց կազմակերպության կառուցվածքը՝ համապատասխանեցնելով այն իր մարդկանց անհատական բնութագրերին: Նա ստեղծեց ժողովրդավարական բանակ, խրախուսեց սպաների նախաձեռնողականությունը, թույլ տվեց նրանց հագնվել այնպես, ինչպես ցանկանում են և չէր պահանջում խստավարժեցում: Արտաքին կարգապահությունը թուլացնելով՝ նա խթանում էր ընկերասիրության ոգին և հոգ էր տանում զինվորների մարտական ոգու մասին: Եվ նրանք անխոնջ էին, ինչպես վայել է թափառաշրջիկներին: Շերմանը օգտվեց դրանից՝ ստեղծելով շարժունակ, ճկուն բանակ: Նրանք անընդհատ շարժման մեջ էին, միշտ ավելի արագ, քան թշնամին, և միշտ ժամանակ էին շահում: Շերմանի բանակը սարսափ էր թշնամու համար՝ կռվելով ավելի լավ, քան որևէ այլ հյուսիսայինների բանակ:

Շերմանի նման, մի պնդեք կարգապահական պայմանների կատարումը, եթե դա ձեր զինվորների մոտ ալերգիա է առաջացնում: Ավելի լավ է մտածեք նրանց ուժեղ

կողմերի մասին, որոնց դիմելը կբարձրացնի ձեր ներուժը: Եղեք ստեղծագործ, աշխատեք խմբի կառուցվածքի վրա և թույլ տվեք, որ ձեր միտքը պահպանի նույն շարժունակությունն ու ճկունությունը, ինչ ձեր ղեկավարած բանակը:

ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ԿԱՐԾԻՔ

Հետևաբար, երբ նրանք պայքարում են... նրանք գործում են իրենց սեփական շահերից ելնելով՝ տարանջատման և միավորման միջոցով փոփոխություններ կատարելով: Ուստի նա քամու պես արագաշարժ է, նա հանգիստ է ու դանդաղ, ինչպես կրակը... նա անթափանցելի է, ինչպես խավարը: Նրա շարժումները նման են որոտի:

Սուն Ցզի (մ.թ.ա. IV դար)

ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԸ

Քանի որ ձեր բանակի կառուցվածքը պետք է համապատասխանի այն մարդկանց, ովքեր այն կազմում են, ապա ապակենտրոնացման օրենքին պետք է ճկուն մոտենալ: Որոշ մարդկանց անհրաժեշտ է ամուր ձեռք: Նույնիսկ եթե դուք ստեղծում եք ավելի ազատ կարգապահություն ունեցող կազմակերպություն, հնարավոր են հանգամանքներ, երբ անհրաժեշտ է խստացնել այն՝ ենթականերին ավելի քիչ ազատություն տալով: Իմաստուն հրամանատարը իր խոսքերը չի փորագրում տախտակների վրա, նա միշտ պատրաստ է վերակազմավորել իր բանակը, որը միևնույն ժամանակ կարող է մնալ ժամանակակից և համապատասխանել ժամանակի թելադրանքներին:

Սկիզբը.
1) https://www.datocms-assets.com/63284/1732378406-first-strategy_arm.pdf
2) https://www.datocms-assets.com/63284/1735414231-last-wars_arm.pdf
3) https://www.datocms-assets.com/63284/1740855330-keep-ur-head_arm.pdf
4) https://www.datocms-assets.com/63284/1744480072-drive-into-desperate_arm.pdf
5) https://www.datocms-assets.com/63284/1747510579-avoid-traps_arm.pdf

Աղբյուրը. https://www.litres.ru/book/robert-grin/33-strategii-voyny-624835/chi